

թիւն մը ունին : Կը վաղեմ , չեն խլրտար . կը պտտամ , չեն պտտասխաներ :

Ո՛վ Ալլան , դիակներ են : Ի՛նչ կարաւան մը , զոր հովը աւազներուն խորէն դուրս է հաներ : Ուղտերուն սուկրտըրին վրայ Արարի կ'մախքներ են նստած , ա՛յն ծակերէն ուր երբեմն աչքեր կային , եւ մասթափ կզակներէն , աւազը կը հտիւ եւ կարծել սպառնալիք մը կը մրննջէ :

«Անմի՛տ , ո՛ւր կը վաղես , քիչ հեռուն՝ ուրաւաններու պետի հանգիպես :» Կը վաղեմ , կը վաղեմ : դիակներ , ուրուականներ , ճամբա՛յ բացե՛ք : Ուրական մը , Ափրիկէն յուզողներուն աւանդն ահա որը , աւազէ ովկիանին վրայ մինաւորիկ կը պտրտէր . հեռուանց զիս կը շնչմարէ , կը զարմանայ , կանգ կ'առնէ . եւ ինք իր վրայ թաւալելով , կ'ըռէ ինքնիրեն .

«Իմ՛ կրտսեր եղբայրներէս ո՛րն է սա հովը , որ իր տխեղծ հասակովն եւ ընդքարչ թոնչովը կը համարձակի այսպէս մինչեւ իմ ժառանգական անապատներու մէջ թեւակոխել :»

Կը մոնչէ ու վրաս կը քայլ՝ շարժուն բուրգի մը պէս : Տեսնելով որ մահկանացու մըն եմ եւ թէ զուլա չեմ ծոեր իրեն , կը կատղի , ոտքը գետին կը դարնէ եւ Արարիոյ կէսը տակն ու վրայ կ'ընէ : Զիս կը բռնէ ինչպէս անդզ մը ճնճղուկ մը կը բռնէ : Յորձանապտոյտ թեւեւրովը զիս կը ծեծէ , բոցավառ շնչովը զիս կ'այրէ , զիս օղը կ'արձակէ , յետոյ գետին կը նետէ :


Կը ցատքեմ ու կը կռուիմ , իր յորձանքներուն հակայական կապանքները կը փրցընեմ : Կը բըզըքտեմ , կը իածկրտեմ զայն . անոր աւազուտ մարմնոյն պատասնները ակունքներու տակ կը փչրիւն : Ուրականը կ'ուղէ սիւնն ձեւով բազուկներէս փախչիլ . չի կըրար ինքզինքն աղատել եւ ահօս ահօս կը փտորի : Գլուխը վտար կ'իջնայ՝ փոշոյ անձրեւի փոխուած , ու վիթխարի դիակը քաղաքի մը պատնէչին պէս ոտքերուս տակ կը տարածուի :

Այն ատեն , շունչ առի . աչքս վերուցի , եւ խորխտաբար աստղերուն նայեցայ . եւ բոլոր աստղերն իրենց սակի աչքերը վրաս կը սեւեռէին , որովհետեւ անապատին մէջ զիս միայն կը տեսնէին :

Ա՛խ , ի՛նչ քաղցր է հոս օղը ծծել կուրծքիդ ամբողջ լայնութեամբը : Օղ կը ծծեմ աղասօրէն , լիօրէն , լայնօրէն : Արարիոյ ամբողջ օղը հաղիւ կը բաւէ թոզերուս : Ա՛խ , ի՛նչ քաղցր է հոս նայիլ՝ աչքերուդ զօրածին չափ .

աչքերս կը լաճնան , կ'ուսովնան , հորիզոնին եղբերքներէն անդին կը ճեղքեն կ'անցնին : Ա՛խ , ի՛նչ քաղցր է հոս բազուկներդ տարածել , համարձակօրէն , ազատօրէն , իրենց ամբողջ ներկայութեամբը , ինծի աջակց կուղայ թէ բազուկներովս բովանդակ տիեզերքը կարող եմ գրկել , արեւելքէն մինչեւ արեւմուտք : Միտքս նետի պէս կը սլանայ . վի՛ր , աւելի վե՛ր , ա՛լ աւելի վի՛ր , մինչեւ անդունդը երկնքին : Եւ ինչպէս մեղուն իր կեանքը կը թաղէ խայթոցին հետ զոր կը միտէ , ես ա՛լ՝ մտքիս հետ՝ երկնքին մէջ հոգի՛ս կը թաղեմ . . . :

ԱՍՏՄ ՄԻՃՓԻԵՎԻՉ (՝)



ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԷՌԻԹԻՆԸ ԵՒ ՆՊԱՏԱԿԸ

—
Շար . (**)
—

Լանգէն գիտակցական ինքնախարէութիւնը համարում է գոյութեան կուռի քննադատելու գործունեւորից մէկը : «Գիտակցական ինքնախարէութիւնը , ասում է նա , առաջին քայլն է դէպ ի մտքի զարգացումը , զլիսաւոր պայմանը եւ նախապատրաստութիւնը կեանքի աւելի լուրջ նպատակներ , մի էական գործօն՝ ճեւախի պատպանման եւ զարգացման համար . բնական յարմարումով նա անուճ եւ նրբանում է սերնդից սերունդ եւ վերջապէս զարգացած զլիսում դառնում է մայրը ոչ միայն խաղի , այլ եւ գեղարուեստի :» Այս է պատճառը , որ բարձր աստիճանի վրայ կանգնած կենդանիները աւելի են խաղում , աչխնքն նրանց երկուստարդութիւնը աւելի երկարատեւ է քան թէ ստորին կենդանիներին : Գրողը մինչեւ անգամ նկատում է հետեւեալը . «Կենդանիները ոչ թէ նրա համար խաղում են որովհետեւ երկուստարդ

(՝) Միջքիբիլի կենսագրութեան շարունակութիւնը սեղի անձկութեան պատճառով ստիպուեցանք յատաջելով թուրք յետազգի :

(**) Տես «Անահիտ» , թիւ 9—10

են , այլ երկտասարդ են , որովհետեւ խաղում են »)

Այսպէս ուրեմն մարդկային հակումը գէպ ի գեղարուեստը ուրիշ թան չէ , բայց եթէ ընական յարմարման՝ մաքի միջոցով մշակուած եւ նրբացած խաղաբնադրը— եթէ կարելի է այսպէս արտայայտել :

Լանգլէն կենդանիներէ եւ երախաների խաղը հինգ կարգի է բաժանում՝ շարժումի , շիննութի , գրայնիսն , իլլիադիոնի եւ ընդորիլուկուրեան խաղեր , որոնցից առաջին երեքի է հիւքը կազմում է մաքուր բնազդը , իսկ վերջին երկուսը առաջին զալին իլլիադիոնից եւ գիտակցական ինքնախաբէութիւնից : Առաջին երեք կարգի խաղերի դիմացը նա զնում է գեղարուեստի ճիւղերից՝ պարը , երաճշտութիւնը , ֆնարեղողութիւնը , ճարտարագեստութիւնը եւ զարդարութիւնը , իսկ իլլիադիոնի եւ ընդորիլուկութեան խաղերի կողքին՝ դերասանական արուեստը , դրաման , վիպը , ֆանդակազոժութիւնը եւ նկարչութիւնը :

Գեղարուեստը իրականութիւնի տարբերում է նրանով որ ներքին ընդօրինակութեան խաղի համար աւելի ազատ եւ ընդարձակ աւպարէզ է ներկայանում : Գեղարուեստական երկը կարծես զանում է մի տեսակ խաղալիք՝ հէնց նոյն իսկ այս խաղի համար : Այն ինչ իրականութիւնը միայն խաղի առաջարկ չէ եւ թոյլ չէ տալիս իւր հետը միշտ խաղալ (ճիշտ այնպէս ինչպէս երախան մեծ եւ կենդանի շան հետ չէ խաղում , այլ աւելի շատ փայտից շինուած շանը հետ , որովհետեւ վախենում է կծելուց) : Կեանքից , իրականութիւնից աւելի շատ լըլուծեան քան թէ խաղի հոտ է բուրում . Երկէքը շատ լաւ է նկատում . « Կեանքը լուրջ է , իսկ գեղարուեստը՝ զուարթ » : Ահա այս զուարթ տրամադրութեանը ենթարկուելու կամ ուրիշ խօսքով բուն էսթետիքական հանոյքը վայելելու համար , պէտք է իրական ազդեցութիւններից , կեանքի մասլլ պծերի տպագորութիւնից ազատ լինել : Իրականութեան եւ ներքին ընդօրինակութեան խաղի մէջ եղած տարբերութիւնը նկատելի է ամէն ժամանակ՝ երբ մարդ կենսական ուժեղ հակասութիւնների ճնշման սակ՝ հարկադրուած է լինում բուն զրացմունքների տպագորութեանը ենթարկուել . օր . , մի կէն հանգիստ դրութեան մէջ էսթետիքական հանոյք է պատճառում , բայց կրքի բուպէին ամէն ինչ փոխուում է . մեր երեսի վրայ անցած վշտի հեռքերը նկատելը՝ էսթե-

տիքական է , այն ինչ բուն վշտի շարժումներին հետեւելը արդէն պահանջում է բնական զգացմունք—կարեկցութիւն : Նոյնպէս մի համարում , մի լիւր , իրական կեանքում երբեք էսթետիքական հանոյք չէին կարող պատճառել . կամ թէ տեսնում ենք մի նկար , մեր պատկերանում է մեմծ հրաշք , կամ մի սեղ գիւթորիկ , որ ծովի կարող է այլեւնրին զոհ է դարձնում հարեւաւոր մարդկանցով լի մի նաւ . բայց զուարճանում եւ հանոյք ենք զգում , այն ինչ իրականութեան մէջ մի հրդեհ , մի այլեւծ ծով , որ մարդկային զոհեր է կլանում , մեզ միայն սարսափ կարող է պատճառել : Երկէքը եւ կարեկցութիւնը , ողբերգութեան հետ կապուած այս երկու էական տարբեր , որոնց վրայ ամենից առաջ Արիստոսեան է մատնանիշ արել , բնմի վրայ համարեա միակամում են հանոյքի հետ , որովհետեւ բնմի իրականութիւն չէ , այլ գիտակցական ինքնախաբէութեան առաջացնող մի միջոց , այն ինչ—այս երկու հոգեկան յատկութիւնները ըստ էութեան միայն ճիւղաձորիս պէտք է առջաջնէին եւ ոչ հանոյք : Առնասարակ բնմի վրայ երբ մի տեսարան հանդիսատեսին այնպէս է յուզում , որ արտասուել է տալիս , էսթետիկական բուն հանոյքը արտասուքի առաջին կաթիլիցն սկսած արդէն դադար է առնում :

Այս բնութիւնը յետոյ միայն նպատակաւորմար իրող համարում յառաջ բերել այն սահմանումը , որ տալիս է նորագոյն էսթետիքը՝ գեղարուեստին : Լանդէի կարծիքով , գեղարուեստը վարժութիւն մը ձեռք բերուած ընդունակութիւն է՝ մարդկանց հանոյք պատճառելու : Այս սահմանումը սակայն փոքրինչ ընդարձակ է եւ նոյն իսկ պակասաւոր : Այս մտքով զուտ զգայական հանոյք պատճառող ամէն տեսակ արուեստներ , որոնք ամիլլական կապ ունեն մեր առօրեայ կեանքի հետ , պէտք է նոյնպէս գեղարուեստի շարքը դասենք , օր . , իւրհարարութիւնը , բժշկութիւնը , եւն . , Որպէսզի գեղարուեստը այսպիսի արուեստներից տարբերուի՝ նրա իսկական սահմանը Լանդէն այսպէս է շքափակում . « Գեղարուեստը վարժութեանը ձեռք բերուած , գործնական շահից անկախ եւ զիստակամ ինքնախաբէութեան հիմնով հիմնուած ընդունակութիւնն է մարդկանց համոյք պատճառելու » : Նրա կարծիքով այս հանոյքը մարդկային զգացմունքների եւ գիտողութեան հորիզոնը լայնացնում ու խորացնում է , հետեւաբար եւ սեռի պահպանման եւ բարելա-

ման զէնքերին մի նոր տարր աւելացնում : Ուրեմն զեղարուեստի նկատմամբ է ոչ թէ «գեղեցիկը» ներկայացնել , այլ «ստեղծել արժէքները , որոնք ժամանակի ողոււն եւ հայեացքներին համեմատ ընդունակ լինին գիտակցական ինքնախարհութիւնը ստաջացնել» : Այս տեսակետն ընդունելով , էսթետիքական շատ նախապաշարունակներ միանգամայն կտրել է ցերումը — բանաստեղծական , արդարադատութիւնը , ողբերգական յանցանքը , ճակատագրական զբաւման , եւն : Թէ «գեղեցիկը» նշանակութիւնը նոյնպէս սահմանափակուած է եւ նրա հեղինակութիւնը փշրուած—սա դրժանական յայտնի է Պէտք է նկատել որ «գեղեցիկը» սկզբունքը մէջտեղ բերողները եղել են ոչ թէ գեղարուեստագէտներ այլ մեծ մասամբ փիլիսոփաներ , որոնք շնայելով երբեմն իրանց էսթետիքական նուրբ կրթութիւնը , գեղարուեստի մասին խօսեր են ոչ թէ իբրեւ զեղարուեստական զգալուն ներազդերի տէր անհատներ , այլ կատարելա ստեղծութեամբ «գեղեցիկը» կամ էսթետիքական ուրիշ գաղափարներ միայն իմաստախիղ են : Այսպէս Ֆ. Թ. Ֆիլերը (զկրմանացի յայտնի էսթետիքագէտը ներկայ դարում) աշխարհը համարում է առտուածային հոգու մի մարմնացում . մարմարի մի կտորի , խօսքերի , գոյների եւ գծերի մէջ զործուած է այս հոգին կամ ուրիշ խօսքով «գեղեցիկը» : Եւրոպականացի կոչուումն է վերոյիշեալ նիւթերից խել այդ աստուածային հոյին , եւ նրան նոր մարմնացումներ սալ : Ուրեմն հին աշխարհահայեացքով «հոգեկանը» արդէն պատրաստ է եւ ներկայ , ու արուեստագէտի գործն է միայն նրան երեւան հանել , մինչդեռ նորերի կարծիքով «բնական»ն է միայն պատրաստ , իսկ հոգեկան»ը առաջ է բերում միայն ինքը՝ արուեստագէտը : Ֆիլերի կարծիքով արուեստագէտը նա է , որ ներշնչուած է աստուածային հոգով եւ այդ հոգին մարմնացնում է իւր ստեղծագործութիւններին մէջ—իսկ նորերի կարծիքով արուեստագէտը մի ձևարդ է , որ ընդունակ է իրբը եւ երեւոյթներն իբան հնազանդեցնել եւ տալ նրանց իւր անհատական կնիքը՝ առանց որ եւ է աստուածային հոգու զորութեան : Նորերը ուզում են բնական աշխարհի կողքին մի արուեստական աշխարհ գնել իբանց խտրուածքով եւ երեւակայութեամբ խտրում (Չորայն յայտնի խօսքերը գեղարուեստի մասին)—մի աշխարհ , որ մարդկային սեփական կեանքի եւ անհատականութեան ծնունդն է :

է : Նորերը խորութիւն չեն զնուած ոչ գեղեցիկի եւ ոչ սոցիալի , ոչ լաւի եւ ոչ վատի մէջ . բացասական երեւոյթներն եւ նիւթեր գրեթէ նրանց համար գոյութիւն ունենին . ընդհակառակն նրանք համոզուած են որ գեղարուեստագէտի աչքին առջին ինչ գեղեցիկ է թւում եւ թէ նա ընդունակ է նոյն իսկ ամենատղիւ նիւթը գեղեցիկ ներկայացնել . օր . , կարեւոր է միթէ մի քանի այլանշաղկ գիւնները պատճառով Ետուկի հրարակիրներինց մէկը՝ «Պատերազմը»՝ ազնի համարել . կաթոյլի խուարամտութիւնն է միայն , որ նորիս այդ նոյն վարպետի մի ուրիշ ստեղծագործութեան ատիթով՝ գերմանական Բայրուտակում վաշարահայտ թիւններին մի երկար շարքից յատոյ սկսեց գնա գեղարուեստագէտն «սակարկութիւններ» էլ անել :

Մի անգամ արդէն նկատեցինք , որ բնութեան մեծութիւնը եւ շքեղութիւնը գեղարուեստը մտածելու կարող ներկայացնել , —եւ ինչն նոյն իսկ ձգտի ներկայացնել , —գա կը մնայ յաւիտեանպէս անգործադրելի : Բայց բնութեան մէջ բաց ի վեհութիւնից՝ կան եւ կոչա ու կոպտա երեւոյթներ . գեղարուեստը պէտք է բնութեան այս արտակ միջավայրից մեզ բաշ ձրացնել եւ նրա մաքուր կողմնը մեզ ցոյց տայ (մաքուր՝ ո՛չ նեղ բարոյական մաքուր) : Բաց ի դրանից , բնութեան ինչպէս եւ կեանքի մէջ իրբը եւ երեւոյթները շատ անդա՛ր երեւան են գալիս խառնիխառն , հաստատու եւ բարզ գանդուածներով . իսկ գեղարուեստը պահանջում է պարզութիւն եւ ամբողջութիւն : Գերմանացի հոչակատար նկարիչներինց մէկը , Ա. Իլլերըքը նկատում է . «Նա է արուեստին տիրապետում , որ ընդունակ է բնութեան զրկից խել նրան» : Անա այս ամբողջութիւնն եւ պարզութիւնն է , որ արուեստագէտը պէտք է խել բնութեան զսկից : Է . Գայթլը նոյնպէս սերուն կերպով նկատում է . «Մտքը մի հոսող ջուր է , բայց երբ հանդիպում է գեղարուեստի թուրմերին՝ դառնում է մի գրաւիչ եւ փայլուն ազամանդ» : Այս ազամանդի փայլն է որ իւրաքանչիւր գեղարուեստագէտը պէտք է կորզէ կենսիկ այիմներից :

Չնայելով որ նորագոյն էսթետիկը այսպիսի ատող էւ գիտական հիմքերի վրայ է կանգնած այնու ամենայնիւ այժմ դեռ կան նոյնիսկ առաջնակարգ հոչակ ունեցող անհատականութիւններ , որոնք կրկնում են հին կերպ՝ Գեղա

բուհարդ պէտք է ծառայի բարոյական նպատակներին, պէտք է լինի զգաւմունար և . Տալստոյ իւր «Թ՛նչ է զեղարուեստը» վերնադրով աշխատութեան յատկաբարտում շոյափում է այս ինչդերի, բնմի հետեւում ակունտես լինելով վազմէրի օպերաներից մէկի փորձին՝ նա նկատագրում է այն դժուարութիւնը, աշխատանքը, ծախսը եւ տանջանքը, որը կապուած է ամէն մի օպերային ներկայացման հետ, եւ բարբառութիւն է անուանում այս բոլորը (որովհետեւ նա ճարտգում է զպայմանքի բարոյականութիւն, որի հիմքը կազմում է ընդհանուր մարդկային սէրը եւ կարեկցութիւնը)։ Բայց ի՞նչն է արցիօք այսքան զոհի կլամոզ գեղարուեստի նպատակը—հարցում է նա, եւ այս հարցին պատասխանելու համար նա մէջ է բերում հին ժամանակներից մինչև ե այժմ գեղարուեստի մասին յայտնուած զանազան կարծիքները եւ ապա աւելացնում է իւր կողմից . «Գեղարուեստի նպատակը կայանում է ո՛չ խորհրդաւոր «իզէա»ներ առաջացնելու եւ ոչ էլ խաղի մէջ . ամենից առաջ սակայն նրա նպատակեց դուրս է հանդը առաջացնելը»։ Գեղարուեստը նրա կարծիքով «կեանքի բարեկարգութեան եւ հարտրակցութեան մի միջոց այն մարդկանց մէջ, որոնք կապուած են ըզգայմունքների ներդաշնակութեամբ» մտէն մի «կուլտուր»ի վերջնական նպատակն այն է, որ մարդիկ բոլ կարելոյն միմեանց հասկանան եւ սիրեն . զեղարուեստն ահա այս նպատակին ծառայող միջոցներից մէկն է :

Այս բուրբից պարզ է, որ Տալստոյի աշխարհայեալացքով, զեղարուեստը իբրեւ՝ եթէ կարելի է ասել՝ ինքնանկարայն, այլևս գոյութիւն չունի . իսկ սրանով նշանակում է գեղարուեստի ծուծը հիմնովին ձմելու եւ ոչնչացնել : Այս ինչդերի աւելի կր լուսաբանուի եւ որու հանձնաքի ձեռունու միակողմանիութիւնը իսկոյն աքիլի է՝ ընկնի, եթէ հետազօտնեք գեղարուեստական որ եւ է ստեղծագործութեան շըրջանառութիւնը հէնց իւր սկզբնական կէտից : Բնութիւնը, կեանքը, զիտողութիւնը, ընկերացանութիւնը, եւն, մարդկային հոգին լըցնում են սպաւորութիւնների եւ պատկերների մի երփներանգ խառնուրդով եւ ահա զեղարուեստական ընդունակութիւն ունեցող անհատը զգում է իւր մէջ մի ներքին պահանջ, անհուն մի ծաբաւ այս պատկերների առաջադրած մութ ստուգերները, ճնշող մնուշը փարատել : Նա ակա՛նայ ընարում է այդ սպաւորութիւնների

եւ պատկերների խառնուրդից այն մասը որ իրան համելի է, ահա երեսակայութիւնն սկըսում է իւր ստեղծագործող պաշտօնը—երեւոյթներիին եւ պատկերներիին կազմուածք է ընծալում, մարմին եւ արիւն է ներշնչում : Երեւակայութեան այս վերարտադրութիւնը մի բարուեստագէտի մօտ կարող է հնչիւններով, մեւսին՝ գոյներով, երրորդին՝ խօսքերով, եւն, արտայայտուել—նայելով իւրաքանչիւր ընդունակութեանը եւ տաղանդի որակութեանը : Արուեստագէտն ստեղծագործում է ոգիւորւած ոչ թէ այն նպատակով որ «մի բան հաղորդած լինի իւր շըջպատողներին», այլ որովհետեւ ինքը ներշնչուած պահանջ է զգում արտաքին աշխարհի երեւոյթները երեսակայութեամբ ընդօրինակելու . նա ջանք է գործում իւր կրաւորական գիրքից գուրս գալ, նա չէ ուզում լինել կեանքի եւ բնութեան ընթացքի զիտողէ միայն, այլ այն ինչ որ ստանում է արտաքուստ՝ մի ջեբմ ցանկութեամբ ձգտում է վերարտադրել, նուրից սնելով, իբրեւ ինքնուրոյն սեփականութիւն : Եւ ստեղծագործելիս նրան երբեք չէ զբաղեցնում այն միտքը թէ իւր «երկը լաւ թէ վատ հետեւանք կ'ունենայ» բարոյական թէ անբարոյական շարժում կ'առաջացնի» :

Թէ զեղարուեստը թաղարակութեան նշանուոր գործօններից մէկն է, թէ նա մարդկային բարքերի կրթման եւ աղնուացման տեսակետից անպին դեր է կատարում, սա մի անհնչքի իրողութիւն է : Բայց որ եւ է երեւոյթի ճնշգճանաչողութիւնը եւ բնորոյումը զդիտում է ոչ թէ նրա հետեւանքներից, այլ ներքին տարրերից, իսկական էութիւնից : Հետեւաբար եւ զեղարուեստի էութիւնը բնորոյելիս՝ պէտք է անպայման հետու մնայ նրա հետեւանքի կամ ազգեցութեան ինչդերից, որովհետեւ նա մի այսպիսի հանպահանջ է որ ոչ մի կապ չունի զեղարուեստի ներքին էութեան հետ՝ որը ինչպէս տեսանք կայանում է մարդկային բնութեան մի անխուսափելի պահանջի մէջ, — վերստեղծել ստացանու տպաւորութիւնները :

Գեղարուեստի այս բուն էութեան մէջ պէտք է փնտտել եւ ներկայ գրական քննադատութեան զազանիքը . զեղարուեստական երկերը ոչ թէ ստան զատողութեան, այլ համարես սքանչանքի առարկայ են դառնում . քննադատը իւր ամբողջ հոգով նրանց անձնատուր է լինում եւ ընկզմած նրանց թողած տպաւորութեան եւ զպայտմնելի ուժի մէջ՝ փորձում է իւր

կողմից նոյնպէս սիրածոր վերադարձը
—լինել թարգման արուեստագէտի ևւ ըն-
թեղցողի մէջ : Գերմանացի մի յայտնի քննա-
դատ իրաւացի կերպով գրական ներկայ
քննադատութիւնը անուանում է «գրական
հոգեբանութիւն» :

Վերուի մի քանի տողերից ընթերցողը զույգ
գայ այս կերպակցութեանը թէ ձգտումը (lean-
dance) ցկարուեստի մէջ առհասարակ չպէտք է
գոյութիւն ունենայ . մեր կարծիքով սա կ'ընա-
նակէ արդէն շատ հետու գնալ : Գեղարուեստա-
կան այս կամ այն երկը կարող է շատ բնական
կերպով ձգտումաւոր լինել . բայց պահանջել որ
գեղարուեստն առնաւարակ պէտք է ձգտումա-
ւոր լինի , սա է անբնականը , սա է սխալը :
Գեղարուեստական երկերի ձգտումաւոր
լինելը բնական ենք համարում , ահա թէ
չիտու . թէև գեղարուեստի նպատակն է
«գործնական շահից անկախ հանոյք առա-
ջացնել» , բայց նրա կապը իրական կեան-
քի հետ երբեք չպէտք է անուշազիր թող-
նել , ժամանակի ողիւն ևւ նրան համապատաս-
խանող պահանջներն ու աշխարհայտեսա-
քը ընծայում են գեղարուեստին նաև իրենց
խոր կնիքը : Այնպէս որ միանգամայն
հակառակ մի երեւոյթ է թէ ինչու Վերածը-
թեան դարը առաջ բերեց կրօնական բնաւոր-
ութիւնն ունեցող մի նկարչութիւն , կամ թէ
Ժժ . դարը սոցիալական դրամա , ինչպէս
նաև մեզանում Բաֆֆիի ձգտումաւոր վէպերը
կամ ուսական գրականութիւնից Դոստոյեւի-
կու կամ Տալստոյի ստեղծագործութիւնները—
միջովայրի ևւ ժամանակակից կենդանի պա-
հանջներին անհրաժեշտ պտուղներն :

Գեղարուեստական ամենաուժեղ ստեղծա-
գործութիւնները , սակայն , նրանք են որոնք
վայրկեանական ներշնչումներ ծնունդ են ,
որոնք ստեղծում են աննախատեսած ևւ
կամ կարճակէլ անկախ որ ևւ է նախատիպից :
Այսպիսի ստեղծագործութիւններ ըզխում են
իրեւ մի լուսատու կայծ մթութեան ևւ գաղտ-
նիքներէ լաբիրինթոսից . այտեղ ըցարծա-
կապէս իշխում է միայն երեւակայութիւնը իւր
վառ թոխըներով՝ առանց կամքի տիրապե-
տութեան : Սա աչքի է ընկնում երաժշտու-
թեան ևւ մանուսեղ քնարիբանական բանաս-
տեղծութեան մէջ ուր բոլորական տպաու-
րութիւնները ամենաուժեղ կերպով կարելի է
պրակտիցանել քան թէ դիցու . քղարմայում կ'աճ
գեղարուեստի միւս ճիւղերում :

Այսպիսի ստեղծագործութիւններէց յետոյ
արուեստագէտ վարպետը կարծես անընդունակ
է իւր հրաշակիրտն ըստ արժանոյն գնահա-
տել . որ . Գլոօթէն էլկկերմանին հայորդում է
հետեւեալը . «Ես իմ գոյնից ռաւումաասիրու-
թի . նովը բանից իմեծ գործ եմ կատարել քան
թէ իմ բանաստեղծութիւններով» : Նոյն-
պէս , պատմում են որ Վադնէրը իւր բանաս-
տեղծութիւններն աւելի բարձր էր դասում
քան թէ իւր երաժշտութիւնը :

Իսց կ'աչ արուեստագէտներ որոնք իրանց
ուժին գիտակից են նոյն իսկ մի քանի սկզբ-
նական ստեղծագործութիւններէց յետոյ : Շիլ-
լէրը , այս անդուական թաւերագիրը , ահա
թէ ինչ է գրում իւր բարեկամ Գէօրգերին՝
«Վ . Թեյլը զեռ չլիբջացրած . ձեթէ աստուած-
ները ինձ շնորհ անեն զուրիս բերելու այն ինչ
որ շարժում է իմ Ժրտքը՝ այն ժամանակ ես մի
այլ պիսի ուժեղ գործ կ'արտագրեմ , որից
գերմանական ամբողջ թատերական աշխարհը
կը ցնցուի» : Մի ուրիշ նամակում , մի կողմից
շատ համեստ , իսկ միւս կողմից ինքնավատա՛
ոճով գրում է իւր բարեկամ Գլոօթէին . «Իմ
«Վալէնշտայն»ը պէտք է ձեզ ցոյց տայ թէ
զուք ինչ էք ներշնչել ինձ»—այսպիսի ինքնա-
վրստաստութիւնը մեր կարծիքով նոյնիսկ գեղե-
ցիկ յատկութիւն է , ստեղծագործութեան
կրակը միշտ վառ է պահում , մանաւանդ եթէ
դա յուզում է մի անպիսի կուրծք ինչպիսին
հանճարեղ Շիլլէրինն էր :

Նախ քան վերջացնել , մի քանի խօսք ևւս
գեղարուեստական ունի մասին :

«Ոճը , ստում է էլզրը , մի գաղափար է ու-
րով արտայայտում է արուեստագէտի յարա-
բերութիւնը ղէպ ի իւր ընտրած նիւթը» : Եթէ
արուեստագէտը ուժեղ կերպով իր սեփական
խէշաներն ու հայտագեցներն է շեւտում , ի-
ճեալիս է . եթէ նա ըստ կարելոյն հաւատա-
րիմ է մնում երեւակայութեանը , սովականը
որոշ չափով յետ է մղում , տեալիս է . եթէ նա
կեանքը ևւ բնութիւնը իւր բուն իսկութեամբն
է ներկայացնում , նա տրաջիս է :

Թէ «նատուրալիզմ» իւր ծայրայեղ գոյ-
ներով , նոյն իսկ գեղարուեստի էութեանը մի-
անգամայն հակասակ է , սա պարզ երևում է
մեր յօդուածի ամբողջ ընթացիցից . այնպէս
որ այս կետի վրայ կ'անդ առնելը աւելորդ ենք
համարում :

«Բնատուրալիզմ» ևւ «նատուրալիստ» բնութիւնն
ընդօրինակում են միայն ընդօրինակելու

համար. իսկ «Իտէալիստը ձգտում է բնութեան ընդօրինակութիւնը «աւելի բարձր նպատակները ծառայեցնել» : Բնութիւնը իւր իսկութեամբ, այսպէս են մտածում. «Իտէալիստները՝ արժանի չէ ընդօրինակութեանը, որովհետեւ նրա մէջ կան երեւոյթներ որ ստուգելի չեն կանխորոշուած ստոր են : նրանց կարծիքով գեղարուեստները պատան է ահա բնութեան այս սխալը ուղղել, այս պակասութիւնը լրացնել :

Թէ «Իդէալիստական» ուղղութեան ծայրայեղ արտայայտութիւնը գեղարուեստի մէջ նոյնպէս մերժելի է, կարծում ենք սա նոյնպէս պարզուցման մեր յօդուածի ընթացքում : Այնպէս որ իրբեւ առողջ եւ ընդունելի ուղղութիւն մընում է «բէալիզմ» :

«Ախրօլիզմ» , «միտոյիզմ» եւ ուրիշ ժամանակակից «բլոմ»երի մասին չենք խօսում. որովհետեւ զոքս մասամբ մտնում են «Իդէալիստական» ոճի սահմանը եւ մասամբ դրական այտայտութիւններ են :

Ինչպէս գեղարուեստն ինքը, նոյնպէս եւ նրա տարբեր ոճերի կամ ուղղութիւնների ծնունդը եւ անհետանալը, դարձեալ պայմանաւորուած է ժամանակի ոգով եւ շրջապատող հանգամանքներով :

ԲՅՆ

Վ. ԱՆԱԲԱՆ ԳԵՆԱՆ



ՆԵՐՈՎ ԳԻԱ

Գ

Շար. եւ վերջ (*)

— 0 —

Այդ կողմը կը դռնուէին քահանաներն ու Անտիպատի պաշտօնատէրերը, նրուադէմի բրնակիչներ, յունական քաղաքներուն քօղերը, եւ Անթիքի պատուին ստաբուր. Մարիլլոս հարկահաներուն հետ, Չորրորդապետին մէկ քահարէ բարեկամները, Կանայի, Պողոմայիսի, Ներքովի երեւելիները . յետոյ, խառնխառն ,

(*) Տեւ «Անահիտ» քիւ, 1, 6—7, 8, 9—10.

Լերամանցի լեռնականներ, եւ Հեղձիկի ծեր դիւնուորները, տասերկու Թրակացիներ, Գալլիացի մը, երկու Գերման, վիժի որսորդներ, Եռամցի հօտաղներ, Պլամիրի սուլթանը, Նախագահները նուաստներ : Ամէն մէկն էր առջեւ կազմել խմբի շօթ մը ունէր՝ մասները սրբելու համար . եւ բազուկները, առկայ վըղերու պէս երկնայալով, ձիթակատու, պիտակի նուշ կ'առնէին : Ամէն դէմք զուարթ էր, ծաղկեպակներով պծնուած :

Փարիս! Ելները պակ չէին ու զած, համական անպարկեշտութիւն մը համարելով զայն : Սարսուացին երբ իրենց վրայ քաղքան ու խուսիկ սրկիցին, բազազրութիւն մը որ տաճարին մէջ զորածած ունեւ. յաւկացուած էր :

Աւրոյ սառով իր անութը շփեց, եւ Անտիպատի անկից ամբողջ թեք մը խոտաքցաւ անոր, ու երեք ծրայ այն ճշմարիտ բալասանէն որուն համար կ'էնդպարար Պաղեստինը ցանկաց ունենալ :

Իր Տիրերիսի պահակազօրքին մէկ շնչապետը որ քիչ առաջ հասեր էր, անոր հետեւը կը կենար, աբստուղորդ զէպետու մասին անոր խօսելու համար : Բայց իր ուշադրութիւնը բաժնուած էր Անթիքի պատուին եւ մտակայ սեղաններուն վրայ խօսուածներուն միջիւն :

Այնտեղ կը խօսէին Եւթանանին ու անոր պէս մարդոց վրայով. Սիմոն Գեառնացին, կ'ընէին միդքեր կը կարկով կը լուար : Յիսուս անուսով անձ մը . . .

—Ամենէն դէ՛ շը, կոչեց Սիլվաքար . ի՛նչ անըզգամ սնպարար :

Չորրորդապետին կտին, մարդ մը ոտքի եւ լաւ . Իր քղամիդին կզրոյքին պէս տօգոյն : Բարձրաւանդակէն վար իջաւ, եւ, Փարիսեցիներուն ուղղուելով ,

—Սո՛ւտ է, ձայնեց, Յիսուս հրաշքներ կը գործէ :

Անտիպատ կ'ուղէր հրաշք մը տեսնել :

—Հետզ բերելու էիր, Տեղեկութիւն տուր մեզի այդ մարդուն վրայ :

Այն պահի պատմեց թէ ինքը, Յակոբ, հիւանդ աղջիկ մը ունենալով, Կափառնուած գտցեր էր, աղաչել Տէրը որ կամենայ զայն բուժել : Տէրը պատասխանել էր . «Տու՛նդ դարձիր . զաւակդ բուժուած է» : Եւ դրանք սեմին վրայ գտն էր զայն, անկողնէն ելած՝ այն պատու ուր պալատին գնոմոնը կբրոզգ ժամը կը հնչէր, այն բուպէին իսկ ուր ինքը Յիսուսին մտեցեր էր :